

եւ ոճիրներն անգամ սեղանի հետ կապուած էին: Հուսկ ապա՝ ինձոյքը քաղաքական ասպարիզէ վտարուած հայ կնոջ կը շընորհէր կարեւոր դիրք մ'ընկերութեան մէջ:

2. — Յորչորջմուկ: — Շատ զանազան էին ասոնք, եւ իրենց մէջ կ'ամփոփէին հանդիսին սահմանն իսկ: Կ'ըսուէր կոչուեր¹ կամ ընդունուէր², եւ միջնադարեան ռամկերենով՝ հրամանք³, ըստ որում անոր կը հրաւիրուէին բազմութիւն արտաքին անձանց: Խեճոյք կամ խեչոյք⁴ եւ երախան⁵, որ կը նշանակէին հրաւիրելոց ժողովն իսկ՝ փոխանակ հանդիսին: Հացկերոյք⁶ կամ հացկերութիւն⁷, հաց մեծ կամ հաց մեծապէս⁸, ձաշ մեծ⁹, ընրրիք մեծ¹⁰ կամ մեծապէս ընրրիք¹¹ եւ հացընրրիք¹², որոց մէջ կայ ուտելեաց առատութեան զաղափարը՝ որ կը բաժնէ զայս սովորական ճաշերէն: Գիւնընրրիք կամ գիւնարրիք¹³, գիւնարրուցք¹⁴, գիւ-

1. Մանդ. 59, 60, 62. Եսթ. Ա, 3. Յղթ. 2, 20. Ղկ. ԺԳ, 8 եւն. — 2. Մանդ. 59-62. Ղկ. Ե, 29. ԺԳ, 13: — 3. Գոշ Ասկ. 137: — 4. Ոսկ. Մամ. Ա, 686, '94. Թղթ. Ա, 660. Գ Մակ. 2, 22. Խոր. 250: — 5. Եղիշ. 174. Գաւ. 165-6. Տար. վերլծ. Մագ. 213: — 6. Պամ. Աղ. 114. Փիւ. ճոք. 22, 64. Խոսր. Ի Հյկզ: — 7. Փիւ. ճոք. 25. Պամ. Աղ. եւ Պիւ. Ի Հյկզ: — 8. Փաւ. 232: — 9. Կիր. 147: — 10. Փաւ. 236: — 11. Փրսլ. 517: — 12. Մամբ. 74: — 13. Մանդ. 128, '35. Խոր. 204. Պամ. Աղ. 100. Եսթ. Ի, 1. Յղթ. ԺԳ, 2. Ասկ. ԻԳ, 30: — 14. Նար. 517: